

ՁԵՌՔԻ ԵՒ ՊԱՐՏԻՋՊԱՆԱԿԱՆ ԱԺԽԱՏԱՆՔԸ ԴԱՍՏԻԱՐԱ- ԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ

Յօդաժողովս ցանկանում եմ ցոյց տալ, թէ դպրոցական ձեռքի աշխատանքը կամ արհեստները որչափ մեծ նշանակութիւն ունին ոչ թէ միայն գործնական կեանքի, այլ և բուն դաստիարակչական գործողութեան համար. մի խնդիր՝ որ երկար ժամանակից ի վեր դպրոցական աշխարհում օրւայ աչրող անհրաժեշտ հարցերից մէկն էր եղել: Թէ այդ հարցը երբ սկսեց, որպիսի հետեւողներ ունեցաւ, ինչ դրութեան մէջ ֆնաց և թէ այսօր նա եւրոպական պետութիւնների մէջ ինչ աստիճանի վրայ է, որչափ տարածւած է — մենք շուտով կը տեսնենք: Թէ և բաւականին ժամանակ դպրոցներ ունեցել ենք, բայց մինչև օրս ոչ այդ բանի վրայ ուշք է դարձրած և ոչ էլ նրա գործադրութեան համար մտածած: Իմ դանկութիւնն է սրանով մի առաջարկութիւն անել դպրոցական վերահսկողներին, հոգաբարձուներին, ղեկավար տեսուչներին այդ ինկարի ունենալ և եթէ իրօք նրա բազմակողմանի օգտակարութիւնը նշմարեն և յարմար համարեն, այն ժամանակ իրանց կամքին յանձնած դպրոցներում կարելոյն չափ գործադրեն և եթէ հնարուոր է անգամ դպրոցական ծրագրի մէջ մտցնեն՝ որպէս ուսուցման և դաստիարակութեան մի անհրաժեշտ միջոց:

Ինչպէս չայտնի է, մարդկային ցեղի կուլտուրական կեանքը միշտ ձգտում է առաջ դնալ, զարգանալ. լինի նա պոլիտիկի, պետութեան, հասարակութեան, գիտութեան, գեղարվեստի, գրական-

նութեան, ինդուստրիայի, առևտրի, զիւղարհիստութեան և այլ ամեն բանի մէջ: Յառաջ ու յառաջ. ահա այս է եղել ամենքի էլ հեռաւոր նպատակը: Ճշմարիտ է, պարտահել է և յետ գնալը, բայց այն էլ նեղ սահմանափակ շրջանում և ժամանակաւոր կերպով, իսկ հանգիստ տեղում կանգնել—չկայ: Մարդկային ցեղի ամբողջ կուլտուրական կեանքի մէջ ոչ մի ժամանակ չէ եղել, որ մարդկային իդէալը յառաջ գնալու ձգտած չլինէր: Նախքան այդ իրենցութեան մասին դատելը, իւրաքանչիւր ոք պէտք է այս բանը իր համար պարզէ ու մինչև այժմեան ընթացքը պարմական կարևոր ֆաքտորով զննէ: Ուրեմն սկսեմ մի թեթեւ հայեացք ձգել, թէ պարմական ժամանակներից ինչպէս է սկսել ձեռքի աշխատանքի գործադրութիւնը և ինչ հսկանքի հասել: Սրանով ասելիքս աւելի ֆաքտորէն կը պարզւի և թերևս յաջողւի ցոյց տալ նրա իսկական մանկավարժական և դաստիարակչական նշանակութիւնը:

Մանկավարժութեան պարմութեան մէջ տեսնում ենք, որ Քարէլի իր գրւածքներից մէկի մէջ պարմում է, թէ թագաւորի որդի Գարգանուրուան իր մարմնի կաղմակերպութեան համար դաստիարակի պահանջմամբ անձրեային եղանակներին պարտաւոր էր խորերի խորձեր, կապոցներ կապել, փայտեր պղծել, գծագրել և այլն: Որպէս զի դասերի մէջ վերացական սովորածները գործնական կերպով գործադրել կարողանային՝ դաստիարակ և սանիկ միասին զանազան տեսակ հաղարաւոր փոքրիկ, զեղեցիկ երկրաշափական գործիքներ և ձևեր էին պարաստում:

Առաջին մանկավարժ Իոհան Կոմենիուսը, ձեռքի վարժութիւնը ընդհանուր կրթութեան էականմասը համարեց: Նա ընդունում էր առաջին տեղը առարկաների ճանաչողութիւնը, երկրորդ տեղը ցիւղողութիւնը և երրորդ տեղը լեզուի ու ձեռքի վարժութիւնը: Այս առթիւ նա մի այլ տեղում ասում է. «Ձեռքերի վարժութիւնն անհրաժեշտ է, որպէս զի տղան ամենից առաջ հնարաւորութիւն ունենայ իր աշխատանքը առանց որ և է զգալի սխալի առաջ տանել և արագ, զեղեցիկ կերպով աշխատել սովորի»: Դպրոցական աշխատանքի համար նա միայն ընդունում էր դրութիւն և նկարչութիւն: Այս բանի մէջ Կոմենիուսից աւելի առաջ դնաց Ն. Վիգել:

Սա Ենայի համալսարանում մաթեմատիկայի և մանկավարժութեան պրոֆեսոր էր (1625—99 թ.): Սա իր հոգեբանական կարծիքներով Ֆրէսթեյլին մօտեցել էր և ցանկանում էր, որ սանիկները բնութեան և զեղարեւստի գործերի հետ սիրով գործ ունենային. այն էլ ոչ թէ բուն մասնագիտորէն առաջնորդին, այլ բնութեան և զեղարեւստական սրեղծագործութիւնների մասին լսեն, քնեն, անձամբ շօշափեն, փորձեն և այլն: Դրանց շնորհիւ սանիկները միջոց կ'ունենան իրանց քնքուշ, մաւրաղ ողինները վարժեցնել: Այդ հրաշալիքները չափել, համարել, նմանները գտնել, մի կարգի վերածել և այլն: Իսկ մանուկների սկզբնական վարժութեան համար՝ Ալֆէլը ցանկանում էր՝ որ նրանք փայտի կտորներով, ձողիկներով, կարտոնով և թղթով առաջնորդւին: Դրանցից նրանք շինելու էին այս կամ այն ձևը, շինութիւնը, առարկան և այլն: Սրանց հետ միասին պատրաստելու էին այնպիսի իրեր, որոնք թւարանութիւնից, երկրաչափութիւնից են բղխելու—օրինակ թղթի փոքրիկ մոդէլներ պատրաստել, արեւի ժամացոյց շինել, ծանօթ դեղերի, հարթ և փոքրիկ բարձրութիւնների գիրքը գծագրել: չափել և այլն:

Լուդովիկոս XIV-ի ժամանակ էլ բարձր ազնական դասակարգի սրբապետ համար դաստիարակութեան մի այլ իդէալ առաջ եկաւ: Այս բանին պարագլուխ հանդիսացաւ Լոքէյն: Ըստ սորա, ազնականն էլ պէտք է այս կամ այն արհեստը սովորի և այն էլ երկու կամ երեք արհեստ միասին, որոնցից մէկի վրայ առանձին ուշք պիտի դարձնի: Նրա կարծիքով դրա շնորհիւ ձեռք բերած ճարտիկութիւնը այնչափ գին ունի՝ որչափ լիզուներ, գիտութիւն վարժ ու կանոնաւոր գիտենալը: Այդ պատճառով Լոքէյն ձեռքերի վարժութեանը մեծ տեղ է տալիս, մանաւանդ երբ նա ազատ օգիւմէջ է կատարուում, որով մաւրաղ սերնդի առողջութիւնը աւելի կանոնաւոր կը լինի. այդ նպատակով նա առաջին անգամ տալիս է պարբերականական և փայտի աշխատանքներին: Նա պնդում է, թէ այս տեսակ աշխատանքները ոչ թէ միայն հոգու թմրած դրութիւնը կը ցրեն, այլ և մարմինը գործունէութեան մէջ կը դնեն: Գալով զուր գպրոցական աշխատանքին, Լոքէյն առաջարկում է ջնարակել (lackieren), պղնձի, արծաթի վրայ փորագրել, ազնիւ քարեր չղիւլ. և վերջապէս նա ձեռագործի աշխատանքի համար հե-

արևելալ խօսքերն է ասում: «Երկրասարդ տղան չպէտք է շարունակ սովորի, կարդայ և ընկերական դարձութիւններ անէ, այլ և նա պէտք է իր մարմնական, Ֆիզիկական վարժութիւններն էլ ինկադի ունենայ: այդ պարճառով օրական մի քանի ժամ ազատ սիրտի լինի: այդպէս չարաւ՝ կը նշանակէ նա իր առողջութեան պէմ գործեց, սխալ արաւ»:

Այս հարցերի մէջ Ռուսոն աւելի խորն է գնում, որի մասին մի քանի խօսք ասելն աւելորդ չեմ համարում: Ռուսոն իր «Էմիլի» մէջ շատ փեղեր այդ մտքնացոյց է անում: «Որչափ հնարաւոր է, մարդ պէտք է այնպիսի գործունէութեան մասին խօսի, որոնց ինքը գործնական կերպով կարող է կատարել: Այդ պարճառով բոլորովին հակառակ բան կը լինէր, երբ բնութեան և նրա ուժերի մասին խօսելիս ուսուցիչը տղաներին փորձնական դաշլիճը չտանէր և փորձերով ամեն ինչ ցոյց չտար» ասում է նա մի ուրիշ տեղում: Բացի դրանից նա պահանջում է, որ այդ փորձերը տղան ինքը կատարէ, գործիքները հետգնդեմ ինքը աշակերտը հնարել, պարտաստել կալողանայ: Այս փոսակ փորձերով ձեռք բերած զաղափարները, մտապարկերներն անշուշտ աւելի հիմնաւոր, պարզ և հասկարարուն կը լինին՝ քան ուրիշի հնարած գործիքներով և պարտաստի մէքե-նաներով եղած փորձերը: Զշմարիտ է, այս կերպ պարած աշխատանքը դանդաղ է աւաջ գնում, բայց դրանով տղան իր գործնական աշխատանքով մարմինը, զանազան անդամներն ու գործարանները գործունէութեան մէջ է գնում: Դրանով նրանք վարժութիւն են ստանում, և ընդհանուրին օգտակար ուղղութիւն ու ճարպիկութիւն ձեռք կը բերեն: Որպէս զի սանիկը հասարակական և ընկերական չարաբերութիւնները, մարդկանց իրար հետ ունեցած կախումը ճիշտ սովորել կարողանայ, դաստիարակը պարտաւոր է նրան աշխատանքներն առաջնորդել: Ի հարկէ սրանով ոչ թէ միայն ուրիշի աշխատանքը փնտելու, իսկ ինքը ձեռքերը ծալած հանգիստ հասելու համար: Ընդհակառակն, այսպիսի դաստիարակը իր օրինակով նրան օրինակ է լինելու: նա պէտք է լաւ հասկանայ, որ մի ժամայ գործնական աշխատանքը սանիկին աւելի շատ բան է սովորեցնում՝ քան թէ օրերով վերացական կերպով նրանց զանազան բաներ սովորեցնելը: Այս պարճառով նա ցանկանում էր, որ իր սանիկ Էմիլը որևէ

արհեստի կանոնաւոր կերպով զիւննաց. այն էլ երկու պատճառով ա) նա, որպէս հասարակութեան մէջ ապրող անհատ, պարտաւոր է իր գոյութիւնը իր սեփական աշխատանքով պահպանել. բ) երբ նա կեանքի պատահարներից իր ունեցածը կորցնէ՝ այն ժամանակ կարողանալ իր աշխատանքով կեանքը պահպանել: Այսպիսով ձեռքի աշխատանքը մարդու բոլոր զբաղմունքների և գործերի մէջ բնական դրութեան ամենից մօտեցնողն է, քանի որ մարդս սրա միջոցով աւելի անկախ կը լինի՝ քան ուրիշ այլ պաշտօններով պարապելիս: Մանկավարժական դասակէտով Ռուսոն արագձագործութիւնը համապատասխան արհեստին է համարում, որը նրա հոգու կազմութեան համար մեծ նշանակութիւն ու ազդեցութիւն ունի: Մի լուսքով Ռուսօյի ուղղութիւնն ու ցանկութիւնն էր, որ սանիկը աշխատէ ինչպէս գիւղացի, միածէ ինչպէս փիլիսոփայ:

Վերոյիշեալ անձերի ցանած սերմերն ու պահանջները զուր չանցան. նրանք միքերի շփման որոշ չափով առիթ ու զարկ տւին. և ահա երբեմն թոյլ, երբեմն յաջող փորձեր էլ եղան, որ ձեռքի աշխատանքը դպրոցներում կամ սրանց կից հիմնարկութիւնների մէջ հաստատուեն, արհեստանոցներ բացւին, նոյն իսկ որբ ու չքաւորների համար որպէս օրական պարէն հայթայթող միջոց ծառայեն: Այս կողմից յայտնի է Հալլէի որբերի խնամակալութեան տունը. այստեղ ոչ թէ գերակշռութիւնը տւած էր՝ որ որբ տղաները միայն այս կամ այն արհեստը սովորեն, իսկ աղջիկները կարել, մանել, դործել և այլ ընտանեկան աշխատանք, այլ և նոյնպէս մեծ ուշք էր դարձրած անտեսական ու մանկավարժական պահանջների վրայ և նրանց համաձայն էր գործը առաջ գնում: Այս կողմից աւելի յայտնի էր Ֆրանկի հաստատած հիմնարկութիւնը՝ ուր ազնւական և այլ յայտնի մարդկանց որդիք հաւաքւում էին ձեռքի աշխատանքով պարապելու: Նոյն իսկ ներկայ ռէալ ուսումնարաններումն էլ ձեռքի աշխատանքը տեղ գտաւ:

Այս օրինակներ տուողներից առաջինը եղաւ Խ. Զէմլէրը 1705 թ. Հալէյում: Այս ուսումնարանի ուղղութիւնը և պահանջը գլխաւորապէս նորանումն էր, որ աշակերտներն ապագայի համար լաւ եկեղեցական, պետական պատրաստի աշխատաւորներ դառնան: Միևնոյն ժամանակ նրանք կարծում էին թէ գործնական աշխատանքով

դատողութիւնն ու մտածելու ընդունակութիւնն աւելի կը բացւի և սրա հետ միասին աշակերտները նիւթական, անոստական առարկաների ճիշդ դեհաճութիւնը աւելի լաւ կարող են իմանալ և վերջապէս կ'իմանան թէ օգտակար գործիքներն ի՞նչպէս պէտք է գործածեն։ Սրանցից պարզ երևում է, որ սանիկներն այդ միջոցով բացի ապագայ նիւթական օգուտներից՝ հնարաւորութիւն կ'ունենան լաւ աչքի չափ, ձեռքի վարժութիւն ու գործունէութիւն ձեռք բերելու։

Բոհէմիայում Ֆ. Կինդերմանի (1740—1801 թ.) շնորհիւ այս գաղափարներն ու գործնական աշխատանքը տարածւեց։ Սա առաջ քահանայ էր, իսկ 1775 թ-ից Պրագայում պրոֆեսոր և փեսու։ Դերմանօ-բոհեմական ժողովրդական դպրոցների. նրա կարծիքով՝ նոյն իսկ կանոնաւոր, նորմալ կերպով առաջնորդւած ժողովրդական դպրոցը չի կարող իր բուն նպատակին հասնել. այդ պատճառով նա յարմար էր համարում զասարաններին կից մի փոքրիկ աշխատանոց ունենալ, ուր աշակերտները իրանց սովորած առարկաների մեծ մասը գործնական աշխատանքի հետ կը կապեն. դրանով ուղաները հէնց մանկական հասակից սկսած աշխատանքի, գործի կը սովորեն, միայն այս միջոցով նրանց մէջ գործունէութեան սէր և ինդուստրիական ոգի կը զարթեցնենք։

Մինչև այժմ ասածներէիցս երևում է, որ ձեռքի աշխատանքը առհասարակ միշտ կապւած էր ժողովրդական դպրոցների հետ։ Այդ բանը հետզհետէ փոխեց և Բազէղովը իր գրութիւնների մէջ յարմար էր համարում միւսնոցը մեծերին էլ սովորեցնել. նա առաջարկում էր ուղաներին 5 տարեկանից սկսած Ֆիզիկական աշխատանքների մէջ վարժեցնել։ Սրա հետ միասին նրանք տարւայ ժամանակների համաձայն էլ գործեր պէտք է անէին. ամառը պարտիզպանական աշխատանքով պարապել, իսկ ձմեռը զանազան տեսակ խաղալիքներ կամ սրանց նման բաներ պատրաստելով։ 1778 թ. ուսման ծրագրի համաձայն, հասակաւոր ուղաները պարտաւորուած են ժամը 1—2-ը կասելով և արագձագործութեամբ պարապել. իսկ 1779 թ-ի ընդհանուր գերմանական ուսուցչական ժողովների մէկի վճռից երևում է, որ ուղաները պարտաւորուած են կարտոնի զանազան աշխատանքներով և ջնարակելով պարապել։

Ձեռագործ աշխատանքի նշանակութիւնը աւելի լաւ հասկացաւ այն ժամանակեայ յայտնի մանկավարժներէց մէկը՝ Զալցմանը։ Սրա կարծիքով ձեռքի աշխատանքը այնպիսի մի դաստիարակութիւն է՝ որով մարդիկ բարի և բարկաւոր կը դառնան. քանի որ դրանով մարմինը կը կազմակերպուի, կը զօրանայ և ոյժերն էլ թարմ կը մնան։ Այս պատճառով էլ նա պահանջում էր ձեռքի աշխատանքին լուրջ վերաբերելու Բազէլովի, Զալցմանի ուղղութեանը հետեցիին շարերը, և 18-րդ դարից սկսած փղաների ձեռքի աշխատանքի խնդիրն աւելի առաջ գնաց։ Այդ խնդրում նշանաւոր փոշ է բռնում Հոյզինգէրը։ Սա Ռուսոյի, Զալցմանի և ուրիշների քարոզած սկզբունքները ընդունելուց յետոյ՝ մինն ոչն ժամանակ աչքի և ճաշակի զարգացման համար յարմար համարեց ձեռագործի աշխատանքի մէջ նոյնպէս մտցնել կաւից, գիպսից փոքրիկ արձաններ և այլ իրեր կաղապարելը (modellieren)։ Հոյզինգէրն այս բանը նկարչութիւնից բարձր էր համարում։ Մանկավարժութեան գլխաւոր փայլուն աստղերից մէկը Պեստալոցին, իր դրական գործերով ու հետեւողներով, մանուկների հոգեկան զարգացման համեմատ, այս բանը իրազննական դասաւանդման հիմք ընդունեց, որով մասնադասերնդի կը թուլթեան գործը առաջ տարաւ։ Նա ձեռքի աշխատանքը ոչ թէ կը թուլթեան նպատակ ընդունեց, այլ որպէս միջոց։ Մասնադասերունդը աշխատանքի հետ միասին է դաստիարակելու, քանի որ դաստիարակութեան էական կէտը պէտք է ձեռագործի աշխատանքի մէջ գտնել։ Խօսելով այդ մասին, Պեստալոցին հետեւեալ միտքն է արտայայտում։ Դասաւանդութիւնը սանիկի կեանքի կազմութեան համար դեռ միայն խօսքեր է, այն ինչ նրա իսկական նպատակն է լինելու իր ճշմարտութիւններով սանիկին հաստատ գիտակցութեան հասցնել։ Այս բանին կարելի է հասնել այն ժամանակ՝ երբ փղան անձամբ աշխատանքին մասնակցէ, աշխատանքի հետաքրքրութիւնը նրա մէջ միշտ վառ մնայ. մի խօսքով փղալի հոգին և սիրտը պէտք է իր մարմնի աշխատանքով ձեռք բերածի մէջ միշտ մասնակից լինի։ Այս ասելով, ի հարկէ չպէտք է հասկանալ, թէ ձեռքի աշխատանքը հոգու ուժին էլ պէտք է կլանէ։ Մի ուրիշ փոշում էլ Պեստալոցին պահանջում է, որ իւրաքանչիւր ոք ուսումը պէտք է աշխատանքի ժամանակ ձեռք բերէ և ոչ թէ

շոր ու դամաք վերացական ուսումը ձեռքի աշխատանքից առաջ
 դնալ: Ճշակերտը զլխաւորապէս պէտք է իր ուսումը աշխատան-
 քից զուրս բերէ և ոչ թէ ուսումից աշխատանքը: Պետաւոյցիւն
 իր պահանջներէ մէջ շատ հեռու գնաց, որոնց մասին այսօր աւե-
 լորդ Էմ համարում մանրամասն խօսել: XIX-րդ դարու սկզբներին
 փրիւստփաշտութեան, մանաւանդ մանկավարժութեան տեսական մա-
 սին զարկ դեռ, նրան հաստատուն հիմքերի վերայ դնող Հերըարտը,
 ձեռքի աշխատանքը համարում էր սխառեմատիկական, կանոնաւոր
 գործունէութեան մի փառաւոր նախապայտարասութիւն: Խոյ բնա-
 ւորութեան կրթութեան համար՝ ամենազլխաւոր միջոցը: Դաստիա-
 րակութեան գործում, դարուս ամենամեծ մարդկանցից մէկը՝ Ֆրէօբէլ,
 հիմնելով նախորդների վերայ, առհասարակ ձեռքի աշխատանքն
 աւելի ընդհանրացրեց ոչ միայն ուսումնարան այցելողների, այլ և
 դեռ նոր թոթովող մանուկների համար: Նա ինքը չբաւականացաւ
 իր թէօրիաներ ստեղծելով, այլ երկար ժամանակ գործնական կեր-
 պով ուսումնասիրելով մանկան արարքներն ու գործը՝ այն եզրակա-
 ցութեանն եկաւ, որ իրաւ փայլք, առանց ուրիշի օգնութեան,
 իրանց համար խաղ, զբաղմունք են հնարում և դրանով բաւակա-
 նանում: Ահա այս պարտաւորով այդ մեծ մարդը շատ պարզ և ան-
 պաճօճ խօսքերով խոստովանում է ասելով. «Նա ամեն ինչ սովորել
 եւ երեսաններից և կրկին տալիս եւ նրանց այն՝ ինչ նրանցից էի
 սովորել»: Ֆրէօբէլն, այն, մարդկային կեանքը շատ լաւ ուսումնա-
 սիրել էր. նա աշխատանքի դաստաւութեան մէջ մի նոր ուղղու-
 թիւն մտցրեց: Նա գանգաւորում էր դաստիարակութեան և ուսուց-
 ման սխալ հայեացքներից. նա իրաւացի կերպով նկատում
 էր, որ այդ սխալ ուղղութեան հիմքը մարդու բնաւորութեան և
 մտաւոր կարողութեան մասին թիւր կարծիք ունենալուցն է. այդ
 պարտաւորով ասում է. «Մարդու հոգեկան ուժերի զարգացման հիմքը
 ոչ թէ միայն նրա մտաւոր, վերայական՝ այլ գործնական կողմն է:
 Մարդն ոչ թէ տեսականի, այլ գործնականի համար է: Այս միև-
 նոյնը ապացուցում է նաև մարդկային պարտութիւնը, ինչպէս
 մենք այդ միևնոյնը ամեն անհասկ վերայ կը տեսնենք: Մարդկու-
 թիւնը իր զարգացման մէջ գործելով է մտաճողութեան հասել.
 զրա համար էլ Ֆրէօբէլը իր ճշմարիտ գիւտով ոգևորւելով ասում է.

«Գործունէութիւնն ու աշխատանքը նոր անող մանկան կեանքի տառջին երեւոյթներն են»։ Մի քանի խօսքով բաւականաւորով այս մեծ մարդու գործունէութեան մասին չիշնեք դարուս կիսից աշխատողներին մի քանիսին ևս։

Զնայելով որ մինչև յիսուսական թւականները շատ շատերը ձեռագործի աշխատանքը ուսումնարանի հետ կցեցին, բայց և այնպէս դեռ նա գործնական հողի վերայ չիրականացաւ. կրկին այդ խնդիրներն արծարծողների մահից յետոյ՝ նրանց միւքերը որպէս պատմական նիւթեր ֆնացին։ Յիսուսական թւականներին Գերմանիայում այս միևնոյն խնդիրը կրկին առաջ եկաւ. նա դարձեալ քաղաքացիութիւն ստացաւ և օրաց հարցերից մէկն եղաւ. ըստ որում մանկավարժական աշխարհի շատ ականաւոր մարդիկ, ինչպէս սլոնի, Բիլդերման, Դիստերլէդ, Հարյման, Պոլէ և ուրիշները նոյն խնդիրը այլ և այլ փեսակերներով նորից առաջ բերին, մշակեցին. այն էլ ոչ միայն տղայոց դպրոցների, այլ և օրիորդաց, որբերի, համրների, ընկեցիկների հիմնարկութիւնների մէջ ուղեցան մրցներ։ Նրանք ցանկանում էին կեանքի համար գործնական, ընդհանուր, բաղմակողմանի կրթած մարդիկ պատրաստել։ Վերջապէս այս թւականներին էր, որ Ֆրէօբէլին հետեւողները ցանկացան նրա ցոյց ուած բոլոր գործնական ձեռքի աշխատանքները դպրոցի համար լրացուցիչ և անհրաժեշտ մաս դարձնել։ Նրանք այդ ուղղութեամբ գործեցին, նիւթեր մշակեցին. այսպէս Կէօլէր 1863 թ. Վալմարում և Գոթալում, Գինհարթ Գլեգելում, Զալցել, Շմիդ, Ֆիշէր Վեննալում, Բարդ Լապցիգում, Յիլլեր իր մանկավարժական սեմինարիալում, Բոյսթ Յիւրիսում, Շույց Բեկիւրցի ուսուցչական սեմինարիալում և այլք ձեռքի աշխատանքը գործնական կերպով մտցրին։ Աթանասական թւականներին Գլաուգոս Հասը Կոպենհագենից կրկին անդամ վերադարձաւ Գերմանիա, ձեռքի աշխատանքի մասին իր կազմած, զեղեցիկ և կանոնաւոր մշակած թէօրիաներն ու միւքերը նորից քարոզեց Բրէզդէնում, Բեռլինում, Ստրասբուրգում, Գոթլիպում և այլ փեղերում։ Հետեւեալն այն եղաւ, որ այդ հարցը վերստին զարթեւով լրագրութեան և լուրջ քննադատութեան նիւթ դարձաւ։ Սկսեց հետեւեցին շատերը՝ որոնց մէջ ամենից նշանաւորն եղաւ Շենկենդորֆը. սա մինչև օրս էլ այդ ուղղութեան

պարագլուխն է: Այս մարդը իր նախորդի ուղղութեանը հեղեկելով՝ ձեռքի աշխատանքը աւելի մանկավարժօրէն մշակեց, կանոնաւոր մեթոդի դասի գրեց և նոյն միջոցներն ու գաղափարները ամեն կողմ քարոզում, դասախօսում էր, այնպէս որ վերջիվերջոյ սրա կողմնակիցների շնորհիւ յաջողեց 1880 թւին Պրուսիայի լուսաւորութեան նախարարութեան կողմից պատրաստւորներ ուղարկել Շւէդիա և Դանեմարկ Վլաուսոն Հասի հիմք դրած ձեռքի աշխատանքի արդիւնքը ուսումնասիրելու: Նրանք այսուհի այդ աշխատանքը շաւիմսիթարական վիճակի մէջ գտան թէ դպրոցների և թէ նոյն իսկ տնային արհեստագործութեան համար Պատրաստւորութիւնը յաջող հեղեկանքի հասնելով՝ վերադարձաւ Գերմանիա և կառավարութեան թոյլատուութեամբ՝ Շենկինդորֆի եռանդուն և ջերմաջերմ աշխատութեամբ կաղմեցան ընկերութիւններ, որոնց նպատակն էր Գ. Հասի քարոզած արհեստների գործնական իրագործմանը զարկ տալ: Այդ օրից սկսած, բացի վերոյիշեալ մանկավարժների ձեռնարկած մէկ-մէկ փորձերից, Գերմանիայի զանազան մասերում բացեցան արհեստագիտական ուսումնարաններ. դրանց մէջ նշանաւոր տեղ է բռնում Լաչպիցիլինը՝ որի նպատակն է դպրոցների համար ձեռքի աշխատանքի ուսուցիչներ պատրաստել: Ի հարկէ այս հիմնարկութիւնների նպատակը չէ մասնագէտ արհեստաւորներ պատրաստել, այլ դպրոցական գործին օգնող՝ տնտեսականպէս սովորած առարկաները գործնականպէս իրագործողներ պատրաստել: Լաչպիցիլի այդ հիմնարկութիւնը 1887—96 թ. 1000-ից աւելի մանկավարժ պատրաստի հասակաւոր աշակերտներ է տւել, որոնցից 300-ը օրարերկրացի ուսուցիչներ էին:

Թէ առհասարակ այդ տեսակ արհեստական ուսումնարաններում ինչ բաներ են սովորեցնում, թող ներքի երկու խօսքով ասել: Սրահեստներին ղեկավար ուսուցիչները մասնագէտներ են. նախ տեղեկութիւններ են տալիս տնտեսականի մասին, ապա նոր սխաւմ գործնականը: Գլխաւոր պարասման նիւթերն են՝ փայտերի վրայ գործիքներով զանազան ձևեր փորագրելը, առօրեայ կեանքի համար պարզ սեղան, աթոռ, նայարաններ, շրջանակներ շինելը, երկաթէ թելերից, ծղնոյններից, ուռնու դալար ձիւղերից զանազան առարկաներ՝ զամբիւղներ, կողովներ և այլ բաներ հիւսելը, կաւից, գէղ-

սից փոքրիկ կիսարձաններ, արձաններ ձուլելը, կարտոնից գպրոցական և փնային փեսակ-փեսակ առարկաներ պարարաստելը, նոյնպէս պարզ, կանոնաւոր կազմեր անելը: Պարտիզպանութիւնից—սերմեր, բոյսեր, ծաղիկներ, ծառեր աճեցնել, խնամել, հող պանել, պարուստել, հողերը պարզ կերպով պարարտացնել և այլն: Ի հարկէ, պէտք է ի նկատի ունենալ, որ զանազան երկիրներում, իրանց փաշական պահանջների համաձայն, այս կամ այն մասին աւելի զարկ է տւած՝ քան ուրիշ տեղերում:

Որպէս զի ընթերցողներն աւելի ամփոփ տեղեկութիւններ ունենան, յարմար եմ համարում աշտուղ եւրոպական պետութիւնների մասին ճիշդ տրամաբանական տեղեկութիւններ տալ, որով գպրոցական ձեռքի աշխատանքի ընդարձակ ծաւալ տրանալը պարզ կը լինի: Սկսենք ժամանակ ակնյայտի կերպով կը տեսնուի սրանց հանրօգուտ նշանակութիւնը:

Փինլանդիա: Սա եւրոպայի մէջ ամենաառաջին պետութիւնն է, ուր ձեռքի աշխատանքի արհեստները ծխական գպրոցներից անբաժան են: Այս երկրում 1866 թւից սկսած սեմինարիաների և զիւղական գպրոցների համար ձեռքի աշխատանքի արհեստը պարտադիր եղաւ. իսկ քաղաքային ուսումնարանների մեծ մասի մէջ նոյն ուղղութիւնը մտաւ: Այդ արհեստներն իրանք գպրոցի ուսուցիչներն են աւանդում:

Շւեդիա: Այստեղ ձեռքի աշխատանքը իր հիմքն առաւ հին ազգային և փնային աշխատութիւնից: 1875 թ. հիմք դրեց ձեռագործի արհեստագիտական սեմինարիայի, որը այդ օրից մինչև 1896 թւականը 2.400-ից աւելի ձեռքի աշխատանքի ուսուցիչներ է տուել. սրանցից 600-ը օտարերկրացիներ էին: Ներկայումս Շւեդական 2.000-ից աւելի գպրոցների մէջ այդ արհեստներն ընդունւած են, իսկ ուսուցչական սեմինարիաներում պարտադիր են: Պետութիւնը դրա համար տարեկան 141.656 կրօն է ծախսում:

Նորւեգիա: Այստեղ ևս ձեռքի աշխատանքը ընտանեկան աշխատանքի վրայ հիմնւեց. վերջը նրան մանկավարժական ուղղութիւն տալով՝ տարածեցին բոլոր գպրոցական շրջաններում. իսկ 1891 թւից՝ բոլոր ուսուցչական սեմինարիաների ու քաղա-

քայլին դպրոցների համար պարտադիր եղաւ: Բացի սրանից, բազմաթիւ բարձրագոյն դպրոցներում մուսուլման գործեց:

Դանեմարք. Այս երկրում էլ մինչև 1883 թիւը տնային արհեստներով էին բաւականանում և նրան զարկ տալիս. իսկ դրանից չնայած ձեռքի աշխատանքը համարուեց և դաստիարակութեան մի միջոց, և պետութիւնը նրան պաշտպանեց՝ տարեկան ծախսելով 16.000 կրօն: Միևնույն ժամանակ պարտադիր դարձրին ուսուցչական սեմինարիաների, բարձրագոյն և ժողովրդական դպրոցների համար:

Աւստրիա. Այս պետութեան մէջ դրանց համար կազմեցան շատ ընկերութիւններ, որոնք ամեն կերպ աշխատում էին վողով և դրական միջոցներով օգնել այդ դաստիարակիչ և սիրտ ազնւացնող արհեստներին:

Այսպէս 1893 թ. Վեննայի ընկերութիւններից մէկի տրամադրութեամբ երևում է, որ այդ թւականին միայն Աւստրիայում (ի բաց առած Ունգարիան) 267 այդպիսի դպրոցներ կային. իսկ 1896-ին ձեռքի աշխատանքը ուսուցչական սեմինարիաներից շատերի մէջ մուսուլման գործեց:

(Վերջը տալով թուով)